

ՄԵԱՍՆԻՅԿԻ

ԵՍ ՄԵՌԱՅ



Վօդեիլ 1 դործողութեամբ

Թարգմանութիւն Ս. ԹՈՐՈՍԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուղ. պեր. № 8.

1912



ՄԵՆՍԻՑԿԻ

ԵՍ ՄԵՌԱՅ

Վօղեիլ 1 դործողութեմբ

Թարգմանութիւն Ս. ԹՈՐՈՍԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուղ. պեր. № 8.

1912

175

Настоящая пьеса, подъ заглавіемъ  
„Я умеръ“, переводъ С. Торосяна,  
разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМ-  
ПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на  
Кавказѣ, для представленія на сце-  
нахъ края. (Отзывъ Канцеляріи за  
№ 3890—912. 18 февраля 1912 года,  
гор. Тифлисъ).

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

Անդրէյ Իվանովիչ Մուխալովկին:

Օլգա Վասիլենա, դրա կինը:

Սերգէյ Պետրովիչ Տանէկ, դրանց տանուտէրը:

Ստեփան, Մուխալովկինի ծառան:

Գործակատար:

---

(Շքեղ զարդարած սենեակ եւրոպական ծառակով: Բեմի ձէջտեղը դիվան, որի վերայ պարկած է Մուխալովկինը. ձախ՝ գրասեղան իր պարագաներով, նաեւ հեռախօս գրքոյկով: Աջ եւ ձախ դռներ: Վարագոյրը ըսրծրանալիս Մուխալովկինը պարկած է դիվանի վերայ, ծածկւած սաւանով: Ստեփանը կանգնած է նրա առաջ եւ լալիս է բարձրաձայն):



ՍՏԵՓԱՆ.—(Սրբիչը ձգած է ուսին):  
Կատարեալ ննջեցեալ, տէր-Աստուած,  
տէր-Աստուած. և ի՛նչ անսպասելի... ժողովարանից վերադարձաւ, բարձրացաւ  
սանդուխքներից և հէնց դռների մօտ  
թռխք, վայր ընկաւ և հոգին հանգուցելոց... (Դառնազին հեծկլտում է): Վա՛յ  
աղա ջան, աղա ջան, աղա ջան, ես  
այդպիսի յիմարութիւն քո կողմից չէի  
սպասում... երիտասարդ... առողջ, գեղեցիկ... Անտէր մնան այդ ժողովարաններիը, երևում է մեծ գումար է տանուլ տուել... վշտից աղիքները շուռ են եկել, սիրտը արաքուել ու ամէն: Եւ ի՛նչ մարդ էր, ի՛նչ մարդ, ոսկի էր և ոչ թէ մարդ: Ո՛չ բարկացկոտ, ո՛չ պահանջող, ոչ մի բանով հման չէր իր կիօջը, տիրուհուս, և ամեն բանում ինձ հաւատում էր ամեն բանում: Ստեփան, մի՛թէ բոլոր սիգարները ծխել եմ: Բոլորը աղա ջան... ՚Դէ ուրեմն զնա և գնիր նոր արկղ“... իսկ սիգարները հանգուցեալինը 100-հատը 30-ըուլուց

պակաս չէր լինում...և յանկարծ...վսյ  
անդա ջան, անդա ջան...գլխիդ մեռնեմ  
աղա ջան...„Ստեփան, կարծես զգեստս  
ինձանից բաժանել է ուղում հ՛ը“...  
Շատ ճիշտ էք հրամայում աղա ջան  
հնացել է...„Ուրեմն վերցրու քեզ լինի,  
այլևս ինձ պէտք չէ“...Դէ հիմա քնա  
գտիր այսպիսի աղա և նրան ծառայ-  
իր. պատահում են այնպիսի աղաներ,  
որ նրանց մօտ ծառայելը նոյնիսկ  
ստորութիւն է... (Լալիս և բարձրաձայն)  
վայ անդա ջան, աղա ջան, չարդ տա-  
նեմ աղա ջան, աչքս կուրանար քեզ  
էտ օրը չը տեսնէի... (Լալիս և):

### ՍՏԵՓԱՆ և ՕԼ՛ԳԱ

ՕԼ՛ԳԱ.— (Մտնում և շտապ եւ անհան-  
գիստ). Ստեփան, ի՞նչ ես անում այս-  
տեղ...

ՍՏԵՓԱՆ.— Էլ ինչ պէտք է անեմ,  
տեսնում էք, որ լաց եմ լինում:

ՕԼ՛ԳԱ.— Քեզանից այդ ոչ ոք չի  
խնդրում:

ՍՏԵՓԱՆ.— Ես առանց խնդրելու էլ  
լաց եմ լինում: Աղայիս չեմ կարողա-  
նում մոռանալ, շատ եմ ամիստում...

Ի՞նչ աղա էր, զարմանալի՛, զարմանալի մարդ էր:

ՕԼ՛ԳԱ.— Ինքնատուր պատրաստ է:  
ՍՏԵՓԱՆ.— Այո՛:

ՕԼ՛ԳԱ.— Իսկոյն ևեթ տար սեղանատուն:

ՍՏԵՓԱՆ.— Շատ բարի, (կողմը). Օտէր իմ Աստուած, տէր իմ Աստուած... մի՞թէ այժմ թէյի ժամանակ է, և ինչ ախորժակ էլ ունի թէյ խմելու... («վայ աղա ջան» կանչելով եւ լալով, գնում է):

ՕԼ՛ԳԱ.— Ա՛խ խեղճ Անդրէյ, մեռնել և այսպէս անսպասելի — դա սարսափելի է, ասեմք սրա հետ ուշադնացութիւն շատ յաճախ էր պատահում: Այդ հիւանդութիւնը ստացաւ անիծեալ ժողովարաններից: Բայց ես երբէք չէի սպասում այսպիսի դիպումի. մեռնու... և ահա ես այրի եմ — սարսափելի է: Բայց և այնպէս պէտք է կարգադրութիւններ անել թաղման համար... Սերգէյ Պետրովիչը տանը չէ, ի՞նչ արած, ատիպաւ ես պէտք է ամեն ինչ հոգամ. (շտապ մտեցնում է Ռեռաբուսիւն եւ գանգահարում): Խնդրում եմ միացնել № 383-25... ի՞նչ, 25 և ոչ թէ 35...



այո՛, այո՛, շնորհակալութիւն... (պառու-  
զայից յետոյ)։ „Թաղման գրասենեակի՞ց“  
ա՛...գիտէք ի՞նչ...մեզ մօտ ննջեցեալ  
կայ...ի՞նչ, ինչէք յիմարութիւն անուժ,  
իսկական ննջեցեալ, հասկանում էք.  
մեռաւ իմ ամուսինը, ամուսինս այո՛,  
այո՛, ինձ թւումէ, որ դուք այդ պէտ-  
քէ հասկանաք իմ յուզած ձայ-  
նից...ի՞նչ...որտեղ եմ ապրում, ձեր  
գրասենեակից երեք տուն վերև, Տա-  
նէկի տանը...այո՛, բնակարան №7, այո՛,  
ինչով կարող էք ծառայել...զարմանա-  
լի հարց, յարութիւն տալ իմ ննջե-  
ցեալին դուք անկարող էք...ի՞նչ կա-  
րիք կայ շատախօսելու—ուրեմն հար-  
կաւոր է թաղել...ի՞նչ...ինչ տեսակի՞,  
տաղին, այո՛ տաղին տեսակի, իսկ  
միջան կարծենայ. ի՞նչ, դա հօ կա-  
տարեալ թալան է...լսեցէք, ես ձեզ  
հարսանիքի պատուեր չեմ տալիս, այլ  
Թաղման, հասկանում էք, Թաղման...  
իսկ երկրորդ կարգի. Թաղումը որ-  
քան...գիտէք ի՞նչ, ես ձեզ ուղղակի  
կասեմ, որ դուք շատ, անաստուած  
թանգ էք Թաղում, ինձ իմ հարսանի-  
քը աւելի արժան նստեց քան...դէ՛ ի

հարկէ բոլորը պէտք է ձերը լինի, երգեցիկ խումբը, հոգեհանգիստը, դիակառքը, մի խօսքով բոլոր ձևականութիւնները... Ասացէք խնդրեմ իսկ 3-րդ կարգի թաղումը... Խնչ... և ոչ մի զիջողութիւն... և միթէ չի կարելի փոքր ինչ արժան... անխ այդ ձեր տակսաները... դէ, ինչ արած, թող այդպէս լինի, նեղութիւն կրեցէք ուղարկել ձեր մարդկանցից որևէ մէկին վերցնելու հանգուցեալի չափսը, դագաղի համար, այո, այո, իսկոյն ևեթ...

### ՕԼ՛ԳԱ և ՍՏԵՓԱՆ

**ՍՏԵՓԱՆ.**—(մտնում է լալով). Թէյը պատրաստ է:

**ՕԼ՛ԳԱ.**—Վերջ տուր խնդրեմ քո այդ մնգստոցին, դու ինձ ջղայնացնում ես. (քիչ յետոյ). Ստեփան.

**ՍՏԵՓԱՆ.**—Ինչէք հրամայում... բայց (շարունակում է լալ). բայց ես չեմ կարողանում մոռանալ, շատ եմ ափսոսում աղայիս...

**ՕԼ՛ԳԱ.**—Ահա թէ ինչ... իսկ դու կարծումես ես չեմ ափսոսում, ինչ է:

**ՍՏԵՓԱՆ.**—Է՛հ, ձեզ ինչ... բայց ինչ

կլինի իմ դբութիւնը առանց աղայիս...  
Համեցէք թէյ խմելու...

Օլ'ԳԱ.—Ստեփան, իսկոյն գնա՛ բը-  
ժիշկ Գրատասովի մօտ...

ՄՏԵՓԱՆ.—Շատ բարի:

Օլ'ԳԱ.—Եւ կը խնդրես իմ կողմից  
որ իսկոյն ևեթ այստեղ գտնուի...նա  
բժշկումէր հանգուցեալին և ի հարկէ  
կ'իմանայ Անդրիւշայի մահւան պատ-  
ճառը:

ՄՏԵՓԱՆ.—Էլ ինչ պատճառ, մե-  
ռաւ էլի...

Օլ'ԳԱ.—Բացի դրանից յայտնիր նաև  
ոստիկանութեան, այդ անհրաժեշտ է,  
շտապիր:

ՄՏԵՓԱՆ.—Շատ բարի, ոստիկանա-  
տունը մեր դիմացնէ, իսկոյն ևեթ ա-  
մեն ինչ կը կատարեմ...Օ՛, տէր իմ  
Աստուած, տէր իմ Աստուած...Վայնն  
դա ջան աղա ջան (ասելով գնում է):

Օլ'ԳԱ.—Օ՛հ... որքան գլխացաւանք  
ու անհանգստութիւն, և այս բոլորը  
այսպէս անսպասելի... երեկ երեկո-  
յիան ժողովարանից վերադարձաւ տուն  
և մեռաւ... խօսք չունիմ լաւ սիւր-  
պրիզ է...ասենք այս բոլորը պէտք էր

սպասել Անդրէյ Իվանիչից: Բայց և  
այնպէս այս բոլորից ես այնքան էլ  
գոհ չեմ... մեռաւ... իսկ ես մինչև  
անգամ սգազգեստ չունիմ պատրաս-  
տի... սա խայտառակութիւն է, կա-  
տարեալ խայտառակութիւն... (դուրս է  
գնում յուզեալ):

ՄՈՒԽԻԼԼ.— (Ասում է քնի մէջ). Ութ-  
նոց, իննոց. (վեր է կենում կիսով).  
Օհ... բաւականին քնել եմ. հետաքրք-  
րիւ է ժամը քանիսը կը լինի. (նայում  
է իր ժամացոյցին). Օհօ ժամը 10-ն է  
արդէն: (բարձրանում է տեղից, վրա-  
յից քափւում են ծաղիկները). Այս ի՞նչ  
է, որտե՞ղ եմ ես. դէ ի հարկէ տա-  
նըս... բայց այս ի՞նչ ծաղիկներ են,  
այս ինչ է սաւա՞ն... երեկ ես ժողո-  
վարանումն էի... այո՛, այո՛ ժողովարա-  
նում, յետոյ վերադարձայ տուն, եկայ  
և... ան ան ան, նոր եմ հասկանում  
թէ բանը ինչումն է: Սանդուխքներից  
բարձրանալիս ես ինձ շատ վատ էի  
զգում, հրեի ինձ հետ կրկին է ուշա-  
վնացութիւն պատահել, աւելի երկար  
քան առհասարակ լինում է... և ահա  
իմ սիրելի կինը, ինձ մեռեալներէ

Վարդն է դասել...ես մեռել եմ, հն, հն, հն... Սատանան տանի. բայց ի՞նչ պէս չէր գալիս ինձ երեկ այն անիծեալ կարտը, ինձ մեռեալիս. տարւեցի աջ ու ձախ, երեք հարիւր բուբուլոց մնաց միմիայն 40 կողէկ: (լսեռւմ է Օլ'գայի ճայնը). Կինս է, աւելի լաւ է պարկեմ, տեսնեմ ի՞նչ է պատահելու իմ մահւանից յետոյ: (պարկում է):

Օլ'ԳԱ.— (մտնում է, յտեճում հեռախօսին եւ զանգահարում). Միացրէք խնդրեմ, № 483-47...այո՛, այո՛, շնորհակալութիւն ... ի՞նչ ... տիկին Ավրօրայի խանութից ... ըհ՛ը... այդ դժւք էք տիկին. շատ ուրախ եմ... ձեզ հետ խօսում է Օլ'գա Վասիլենա Մուխալովկինան...այո՛, այո՛, չճանաչեցի՞ք ձայնիցս, այդ շատ բնական է. դուք չէք կարող երևակայել, թէ, որ աստիճան է ջղերս քայքայւած ... սարսափելի ... երևակայեցէք, ամուսինս ինչ անսպասելի սիւրպրիզ արաւ ինձ... դուք ասում էք ի՞նչ սիւրպրիզ, ... ամենազզելի, ամենախայտառակ... երևակայեցէք երեկ երեկոյեան վերադարձաւ ժողովարանից և ... վախճանւեց ... գիտէք

Նրա հիւանդութիւնը... շնորհակալու-  
թիւն, շնորհակալութիւն... բայց բա-  
նը նրանումն է, որ ես չունեմ սև  
զգեստ, այն սգի զգեստ. դէ ի հարկէ,  
եթէ ես առաջուց գիտենայի, շատ  
բնական է, որ ձեզ առաջուց էլ կը պա-  
տւիրէի... Հափսր հաւանական է չի  
հարկաւոր. դէ ի հարկէ... ի սէր Աս-  
տծոյ, որքան կարելի է շուտ, շուտ  
կարեցէք և ուղարկեցէք... ԲՆՆ... ա-  
մենաէժանագին, ամենաէժանագին կը-  
տորից...

Մ ՈՒՆԱԼ.— Սատանան տանի, ինչ-  
պէս խնայողաբար է ծախսում իմ  
մահականից յետոյ:

ՕԼ՛ԳԱ.— (շարունակելով). Այն, այն,  
այդպէս ուրեմն այս երեկոյ... շատ գե-  
ղեցիկ... խորին շնորհակալութիւն. ցը-  
տեսութիւն:

ՕԼ՛ԳԱ. և ՍՏԵՓԱՆ,

ՍՏԵՓԱՆ.— (մտնում է). Բժիշկը դեռ  
քնած է, իսկ ոստիկանութեան զըռ-  
նապանը յայտնեց... Ա՛խ, տէր-  
Աստուած, տէր-Աստուած ... եկել է  
նաև...

ՕԼ՛ԳԱ.— Ո՞վ, դագաղ պատրաստողը

ՍՏԵՓԱՆ.—Ոչ, տան տէրը... Սերգէյ Պետրովիչը:

ՕԼԳԱ.—Խնդրի՛ր, խնդրի՛ր այստեղ, շնու: (Ստեփանը գնում է). Օ՛հ, ինչ սարսափելի է այս բոլորը, այրիանալ և այսպէս անսպասելի՞... ո՛չ սգազգեստ, ոչ տրամադրութիւն, բառիս բուն նըշանակութեամբ ոչինչ...

### ՕԼԳԱ և ՏԱՆԷԵԻ

ՏԱՆԷԵԻ.—(մտնում է շտապ). Մի՛թէ իսկապէս մեռել է.

ՕԼԳԱ.—Ինչպէս տեսնում ես սիրելիս, նրանից այդ պէտք էր սպասել...

ՏԱՆԷԵԻ.—Այո, մարդս ապրում է ապրում և յանկարծ... բարի լոյս թանկագինս. (ուզում է համբուրել):

ՄՈՒԽԱԼ.—Լաւ բաներ կիմանամ ես մահւանիցս յետոյ...

ՕԼԳԱ.—Սերժ, այդ ի՛նչ ես անում. դեռ հանգուցեալը չի սառել ինչպէս կարգնէ, դու արդէն ցանկանում ես համբուրել... դու չես յարգում իմ հանգուցեալ ամուսնուն, Սերժ:

ՏԱՆԷԵԻ.—Օ... Ընդհակառակը ... Ընդհակառակը սիրելիս: (Մուխալովի-

նից). Յարգելի և թանկագին հանդու-  
ցեալ Անդրէյ.— ես քեզ չափազանց  
յարգեցի, սիրեցի, որ դու հնա-  
րաւորութիւնս աւիր շատ կարճ ժամա-  
նակամիջոցում ճանաչել քո գեղեցիկ և  
սիրունիկ կնօջը. ես թանգ եմ գնահա-  
տում քո կապակցութիւնը ժողովա-  
րանների հետ, որի շնորհիւ, միայն,  
մենք չէինք ձանձրանում քո բացա-  
կայութեան միջոցին:

ՄՈՒԽԱԼ.— Ա՛խ դու անասուն:

ՏԱՆԷՆԻ.— Ճիշտն ասած թանկագի-  
նըս, ես այնքան գոհ եմ սիրելի Անդ-  
րէյի մահւամբ, այնքան, որ մինչև ան-  
գամ պատրաստ եմ նրան համբուրել:

ՄՈՒԽԱԼ.— Ապա մէկ փորձիր:

ՏԱՆԷՆԻ.— Օ՛րգա, սիրելիս, դու չես  
կարող երևակայել, թէ որքան բաղդա-  
ւոր եմ զգում ինձ... վերջապէս դու ա-  
զատ ես և կը լինես իմը, միմիայն  
ինձ կը պատկանես, միմիայն ինձ:

Օ՛ՐԳԱ.— Ա՛խ, Սերժ, նախ և առաջ  
կատարենք մեր պարտականութիւննե-  
րը, թաղենք, հողին յանձնենք նրան,  
ապա յետոյ արդէն խօսենք մեր ա-  
մուսնութեան մասին:



**ՄՈՒԽԱԼ.**—Այդ դեռ կը տեսնենք,  
թէ ինչպէս կը թաղէք դուք ինձ:

**ՏԱՆԷՆԻ.**—Շատ բարի, սիրելիս, ես  
այդ հասկանում եմ, և խնդրում եմ  
քեզանից, որ քեզ հանգիստ պահես,  
չը ջղայնանաս... Ի հարկէ Անդրիւ-  
շան քո ամուսինն էր, խօսք չունիմ,  
բայց չպէտք է մոռանալ նաև այն, որ  
նա, սիրելիս, „այնտեղ է“ (ցոյց է տա-  
լիս բարձր). իսկ ես „այստեղ“:

**ՕՂ՛ԳԱ.**—Ա՛խ, Սերժ. այս բոլորը  
այնքան անսպասելի եղաւ, որ ես գը-  
լուխս բոլորովին կորցրել եմ: Երևա-  
կայիր, եղել է նաև չորրորդ կարգի  
թաղումն իսկ ես պատուիրեցի թաղել  
երրորդ կարգով:

**ՏԱՆԷՆԻ.**—Ոչինչ, ոչինչ սիրելիս, մի  
խնայիր, Անդրիւշայի համար չ'պէտքէ  
խնայել, նա չափազանց լաւ ամուսին  
էր քեզ համար:

**ՄՈՒԽԱԼ.**—Անպիտան. դեռ հալա  
գովում էլ է:

**ՏԱՆԷՆԻ.**—Դէ սիրելիս, առայժմ ցը-  
տեսութիւն, այս բոպէիս կը վազեմ և  
կը գնեմ մի գեղեցիկ պսակ, իմ թան-  
կագին Անդրիւշայի համար: Օ՛լ՛գա, սի-

քելիս, հանգիստ պահիր քեզ և յիշիր, որ նա „այնտեղ է, —“ Աստուած հողին շուսաւորէ, իսկ ես — „այստեղ“ . ց'տե- սութիւն... (շտապ դուրս ե գնում):

Օ՛լ'ԳԱ. — Օ՛հ... ինչ բարի, ինչ հրա- շալի մարդ է Սերգէյ Պետրովիչը. մի- թէ կարելի է նրան համեմատել Անդ- րէյ Իվանիչի հետ... և ինչպէս ես ա- մուսնացայ այսպիսի անտանելի և չըն- չին մարդու հետ... սարսափելի է, ուղղակի սարսափելի: (վրդովեաձ դուրս ե գնում):

ՄՈՒԽԱԼ. — (բարձրաճում ե). Ես մե- ուել եմ. յամենայն դէպս այդ վճուած է կնօջս կողմից, միայն չի ստորա- գրւած և վավերացւած բժշկի և ու- տիկանութեան կողմից... անպիտան- նե՛ր... ես ձեզանից շատ շնորհակալ կլինեմ տիկին Օլ'գա Վասիլենա, եթէ իմ փոխանորդի ճակատին ևս նոյն կո- տոշները կպցնէք, որին արժանացրիք ինձ կենդանի ժամանակս. ձեզ հա- մար ի հարկէ այդ առանձին դժւարու- թիւն չի լինի: Սատանան գիտէ, թէ ի՞նչեր չես իմանայ քո մահւանից յե- տոյ. կնօջ հաւատարմութիւնը մէկ,

ընկերոջդ մտերմութիւնը երկու... Եւ հաւատացած եմ, որ անպիտան Տանէ-  
 եր, իմ սառը դիակի վերայ մի գեղե-  
 ցիկ պսակ կը դնէ, յամենայն դէպս  
 ոչ պակաս քան 50 բուբլի արժողու-  
 թեան... դեռ հալա իմ գերեզմանի վե-  
 րայ էլ արձան կը կանգնեցնէ— հետե-  
 եալ մակագրութեամբ— „Ննջիր թան-  
 կագին ընկեր, ննջիր մինչև անեղ դա-  
 տաստանի օրը“... նա „այնտեղ է“—  
 իսկ ես— „այստեղ“: Սրիկնայ, զգեցի՞  
 անասուն... իմ կարծիքով, ամեն մի օ-  
 րինաւոր ամուսին, եթէ նա ուզում է  
 ճաշակել ամուսնական քաղցրութիւ-  
 նը— երջանկութիւնը, հարկաւոր է, որ  
 նա ստեպ ստեպ մեռնի... կարծես մէ-  
 կը գալիս է... դէ Անդրէյ Իվանիչ,  
 մարշ սաւանի տակ: (պարկուս է):

5578

ՍՏԵՓԱՆ և ԳՈՐԾԱԿԱՏԱՐ

3470

ԳՈՐԾ.— Որտեղ է սիրելիս իմ թան-  
 կագին, ձեր հանգուցեալ աղան:

ՍՏԵՓԱՆ.— Ահա այստեղ է, սավանի  
 տակ... (նայում է). կարծես կենդանի  
 պարկած լինի... ճիշտ չեմ ասում...

ԳՈՐԾ.— (Որ մինչ այդ նայում էր):  
 Իսկապէս, ճիշտը ասեմ, սիրելիս, ա-  
 ոռջին անգամն եմ պատահում այսպի-  
 սի ուրախ ննջեցիկի, կարծես պատ-  
 ըրատել է ոչ թէ գերեզմանատուն,  
 այլ հանդէսաբանութիւն: Երբեք է հիւան-

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ  
 ՍՏԵՓԱՆ

դացի է...

ՄՏԵՓԱՆ.—Երբէք միայն երբեմն ուշագնացութիւն էր պատահում, իսկ ուշքի գալուց յետոյ, ամեն ինչ անցնում էր:

ԳՈՐԾ.—Ամուսնացած է:

ՄՏԵՓԱՆ.—Եւ այն էլ ինչպէս:

ԳՈՐԾ.—Մի հարց ևս... ինչո՞ւ է այսպէս ուրախ, չլինի թէ կնօջից բաժանելուց...

ՄՈՒԽԱԼ.—Այս ապուշը այնքան էլ յիմար չէ երևում, ինչպէս ցոյց է տալիս իր արտաքինը:

ՄՏԵՓԱՆ.—Գուցէ և հէնց այդպէս է, այնքան էլ հաշտ չէին... գիշերը կուի, ցերեկը կուի, մի խօսքով, գիշեր ցերեկ տուրուզմիոց:

ԳՈՐԾ.—Պատահում է սիրելիս, աշխարհումս ամեն ինչ պատահում է, անկարելի ոչինչ չկայ:

ՄՏԵՓԱՆ.—(Ուղղելով մտխալովկիների գլուխը): Այս ո՞վ է գլուխը դարձրել այս կողմը...

ԳՈՐԾ.—Հէնց ինքը կարող էր դառնալ... աստ խնդրեմ, սիրելիս, գիշերս մեռաւ...

ՄՏԵՓԱՆ.—Ժամը 3-ին, լուսաբացին:

ԳՈՐԾ.—Դեռ դիակը չի էլ սառել, զարմանալի է, ինչո՞ւ է այսպէս տաք:

ՄՏԵՓԱՆ.—Տէր-Ասուած, դուք ասում

էք դիակը դեռ չի՞ սառել... կենդանի չի՞ արդեօք...

ԳՈՐԾ.— Կենդանիներից սիրելիս միմիայն դերձակներն են չափս վերցնում... (չափում է). 2 արշին և 6 վերջօկ... (զրում է իր փոքրիկ տետրում). հէնց այդպէս էլ կը դրենք:

ՄՏԵՓԱՆ.— Դագաղը լաւը լինի կադնի փայտից պատրաստեցէք:

ԳՈՐԾ.— Երբորդ տեսակի ննջեցեալներին սիրելիս, հասարակ փայտի դագաղով ենք թաղում:

ՄՏԵՓԱՆ.— Է՛հ, ամեն բանի ընդունակ է մեր տիրուհին... դագաղի համար իսկ խնայողութիւն է անում:

ՄՈՒՆԱԼ.— Ես նրան խնայողութիւն ցոյց կը տամ:

ԳՈՐԾ.— Գնացէք սիրելիս ձեր տիրուհու մօտ և յայտնեցէք նրան, որ ես հանգուցեալի չափսը վերցրի, մի որևէ ուրիշ կարգադրութիւն չունի՞ արդեօք անելու:

ՄՏԵՓԱՆ.— Իսկոյն կերթամ... ճհ, ճհ, ճհ... (զնում է):

ԳՈՐԾ.— Զարմանալի ուրախ ննջեցեալ է, կեանքիս մէջ առաջին անգամն եմ տեսնում... մինչ այն աստիճան ուրախ, որ թաղելը նոյնիսկ անխղճութիւն է:

ՄՏԵՓԱՆ.— (մտնում է). Լսել անգամ չուղեց, լաց է լինում և ծնկները ձե-

ծում...

ԳՈՐԾ.—Նա լաց է լինում, իսկ սա ծիծաղում...աշխարհումս ինչեր չեն պատահում...ց'տեսութիւն սիրելիս: (գնում է):

ՄՏԵՓԱՆ.—Տ'տեսութիւն ձերդ մեռելապետութիւն: (գնում է):

ՄՈՒԽԱԼ.—(Բարձրանում է). Գրողը տանի...բաւական հետաքրքիր է. բայց և այնպէս եթէ ես այսպէս պարկած մնամ սոքա ինձ կարող են իսկապէս թաղել...օօ...նչ...ներողութիւն տրիւն, ЭТОТЪ НОМЕРЪ НЕ ПРОЙДЕТЪ... (վեր է կենում): Նախ և առաջ հարկաւոր է հետաձգել իմ թաղումը... (նայում է հեռախօսի գրքոյկին): „Թաղման գրասենեակ“...որտեղ է. 383-25 (գտնում է №-ը). իսկ և իսկ... (զանգահարում է): Խնդրեմ, բարի եղեք միացնել 383-25-ի հետ այո, այո, շնորհակալութիւն... (ձիջոց). սիլ է խօսողը...սիլ, դուք ինքներդ էք հանգուցեալներին այն աշխարհ փոխադրողը, շատ ուրախ եմ... լսեցէք խնդրեմ, կարծեմ ձեզ պատուիրել են պ-ն Մուխալովկինի թաղման համար պատրաստութիւններ տեսնել... Մուխալով-կինի, այո... շատ գեղեցիկ, ձեր ուղարկած մարդը եկաւ և հանգուցեալի չափսը վերցրեց դագաղի համար. ինչ, դուք ասումէք բանը ինչո՞ւն է...անա թէ ինչո՞ւն է.—պ-ն

Մուխալովկինի թաղումը պէտք է հետաձգել... անորոշ ժամանակով... ինչո՞ւ, շատ պարզ... հէնց միմիայն այն պատճառով, որ, երևակայեցէք ննջեցես լըյարութիւն առաւ, կենդանացաւ, այո՛, այո՛, կենդանացաւ... դէ ի՞նչ կարող ես անել, չի ուզում մեռնել և վերջացաւ. ի՞նչ, կատակ, սատանան տանի, ի՞նչ կատակ, ինչէք ասում... ես շատ լուրջ եմ խօսում ձեզ հետ... ի՞նչ, ով է խօսում ձեզ հետ... հէնց ինքը ննջեցես լըյար, ահա թէ ով... հա՛, հա՛, հա՛, (ծիծաղում է). ողորմելին վախեցաւ... (ուրբի ճայն). օհօ... կարծես դարձեալ ով որ դալիս է. դէ մարշ սաւանի տակ... չէ որ ես մեռել եմ... (պարկում է):

ՄՏԵՓԱՆ.— (մտնում է քեյի բաժակը մեռ. քիւն): Այս ի՞նչ էր... տէր իմ Աստուած... այս ի՞նչ է լինում ինձ հետ... կարծեմ, կարծեմ հանդուցեալի ձայնն էր... (դողդողում է, ջի կարողանում խօսել):

ՄՈՒԽԱԼ.— Լսիր, իմ հաւատարիմ Ստեփան...

ՄՏԵՓԱՆ.— (դողդողում է): Տէր-Յիսուս, Քրիստոս, հոգոցն հանդուցելոց ննջեցես լըյար, մեր աղայի... քո ձառայ Անդրէյի... Տէր-Յիսուս Քրիստ...

ՄՈՒԽԱԼ.— Դէ, խլացմը ինչ է, սատանան քեզ տանի...

ՄՏԵՓԱՆ.— (Սարսափով): Օ՛ճճ... հե-

ոու...հեոու ինձանից...Հայր մեր, որ  
յերկինս ես...սուրբ եղիցի... (ասելով  
թիյի բաժակը դնում է պատահած տեղը  
է. փախչում):

**ՄՈՒԽԱԼ.**—Այս յիմարն իսկ վախե-  
ցաւ իմ յարութիւն առնելուց...բայց և  
այնպէս սատանան տանի, սաստիկ  
քաղցած եմ. ննջեցեալին չի խանգա-  
րում երբեմն մի փոքր նախաճաշել...  
(ուզում է վերցնել թիյը. ոտքի ձայն):  
Թո՛ւ...դարձեալ ով որ գալիս է, թոյլ  
չեն տայ մի բաժակ թէյ խմեմ: (պար-  
կում է ե. սաւանը ծածկում):

### ՏԱՆԷԵԻ և ՍՏԵՓԱՆ

**ՏԱՆԷԵԻ.**—Ես քո մըթմըթոցից բան  
չեմ հասկանում...ի՞նչ ես ասում...

**ՍՏԵՓԱՆ.**—(Սարսափից չի կարողա-  
նում մի որոշ բան ասել): Իդրր...վվ...

**ՏԱՆԷԵԻ.**—Սա կամ հարբած է կամ  
ցնդել է. (մօտենում է Մուխալովիին):  
Բանը այն է, որ ես չգիտեմ թէ ժր-  
տեղ դնեմ պսակը, հանգուցեալի գըլ-  
խի՞ն, թէ ոտքերին...Ստեփան, չգիտես  
արդեօք, ննջեցեալի ի՞նչ տեղն են դը-  
նում պսակը...

**ՍՏԵՓԱՆ.**—Կկ...կկե ..կկկե...կենդ...

**ՏԱՆԷԵԻ.**—Ա՛, հասկանում եմ, կըրծ-  
քի վերայ, այդպէս էլ կանենք... (դնում  
է կրծքի վերայ): Հանգչի՛ր խաղաղու-  
թեամբ, թանկագին ընկեր և քնի՛ր,



քնիր հանգիստ անվրդով...

ՄՈՒԽԱԼ. — Կաշխատեմ...

ՏԱՆԷԵԻ. — (վեր ե քոչում): Ի՞նչ...

ՍՏԵՓԱՆ. — Բըր... դըր... կկեն... կենդ...

ՏԱՆԷԵԻ. — Այդ դն էիր:

ՍՏԵՓԱՆ. — Կկկ... կեն... կենդ...

ՏԱՆԷԵԻ. — Թնւ, հարբած, գրողը տանի քեզ... բոլորը այս հարբածի մեղն է... Ի հարկ է մեռել է... և ես ինչից վախեցայ... որտե՞ղ է Օլ'դա Վասիլենան... իշի գլուխ... (ցտայ դուրս ե գնում):

ՍՏԵՓԱՆ. — Կկկ... կենդ... (վախջում):

ՄՈՒԽԱԼ. — (Բարձրաճում է): Վերջին ընծան անկեղծ ընկերոջից. ինչ հրաշալի պսակ է... իսկոյն երևում է, թէ ինչպէս շատ է սիրում ինձ—ինձ սիրելով հանեղրձ միկնոյն ժամանակ կնօջա հետ սիրաբանութիւն է արել այն ժամանակ, երբ ես զբաղւած եմ եղել ժողովարանում թղթախաղով... ես չէի տխրում, կինս էլ ունենալով զբաղմունք, չէր պանգատում տխրութիւնից... պէտք է որ շնորհակալ լինել մեր ընտանիքի բարեկամից: (նայում ե իր ժամացոյցին): Բայց և այնպէս ժամանակ է ծառայութեան գնալու: (դուրս ե գնում):

### ՕԼ'ԳԱ և ՏԱՆԷԵԻ

ՏԱՆԷԵԻ. — Ի հարկ է, առերես հարկաւոր է պահպանել որոշ քաղաքաւա-

րութիւն, բայց երբ միայնակ ենք...

ՕԼ՛ԳՍ.— Բայց չէ որ նա դեռ ևս այստեղ է, մի՞թէ դու այդ չես հասկանում...

ՏԱՆԷԵԻ.— Շատ բարի, „այստեղ է“ բայց չէ որ նա չի կարող վեր կենալ, մօտենալ մեզ և ասել „Դուք ինձ խաբել էք և ես այդ պիտեմ“:

### ՆՈՅՆՔ և ՄՈՒԽԱԼՈՎԿԻՆ

ՄՈՒԽԱԼ.— „Դուք ինձ խաբել էք և ես այդ պիտեմ“:

ՏԱՆԷԵԻ.— Ա՛հ... (ուշաքափ ընկնում)

ՕԼ՛ԳՍ.— Ա՛հ... (նոյնպէս):

ՄՈՒԽԱԼ.— Հանգստացէք, ես արգելք չեմ հանդիսանայ ձեր երջանկութեան... պ-ն Տանէկ, դուք հէնց այսօր կարող էք ամուսնանալ Օ՛լգա Վասիլենայի հետ, հէնց այսօր. ես մեռայ... (կանչում): Ստեփան...

ՍՏԵՓԱՆ.— (Մտնում է սարսափած):

ՄՈՒԽԱԼ.— Վերարկուս, գլխարկս և ձեռնափայտս...

ՍՏԵՓԱՆ.— Կկկ... կեն... կենդա...

ՄՈՒԽԱԼ.— Այո, կենդանի եմ:

Վ. ԱՐԱՐՔՈՅԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

[24]

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՒՄԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037836

3/2

A  $\frac{I}{3470}$

ԳԻՆՆԷ 10 ԿՈՊԵԿ.